ՎԱԼԱՆՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Ն. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից և Պոլսից հայ գաղթականների դեպի Եվրոպա և ԱՄՆ տանող երթուղու վրա Մարսելը նավահանգստային այն քաղաքն էր, որտեղ ափ էին իջնում եղեռնից մազապուրծ եղած հայ տարագիր զանգվածները։ Նրանց մի մասը շարունակում էր իր ճանապարհը դեպի ԱՄՆ, իսկ մնացածները համապատասխան բնակատեղ և ինչ-որ աշխատանք գտնելով հաստատվում էին Մարսելում։ Գաղթականների երրորդ խումբը, որը չուներ սոցիալ-մասնագիտական անհրաժեշտ կարողություններ և չէր կարողանում կենսապայմաններ գտնել Մարսելում հաստատվելու համար (Մարսելում կուտակված էին մեծ քանակությամբ հայ գաղթականներ), թողնում էր քաղաքը, հաստատվում Ֆրանսիայի այլ շրջաններում, որտեղ կարող էին լինել նյութական և սոցիալական տանելի պայմաններ։

Մարսելից Ֆրանսիայում հայերի տեղաբաշխումը կատարվել է երեք հիմնական ուղղությամբ. ա) Հարավային շրջան, Միջերկրական ծովի ափերին ընկած վայրերը (Տուլուզ, Լա Սիստա, Լա Սեյն, Նիցցա և այլն), բ) Կենտրոնական շրջան՝ Մարսել-Փարիզ երկաթուղու ուղղությամբ տեղաբաշխված քաղաքներ (Լիոն, Վալանս, Սենտ-Էտիեն, Գրենոբլ, Վիեն, Սեն-Շամոն և այլն), գ) Փարիզի շրջան (Փարիզը իր Իսի-Լը-Մուլինո, Ալֆորվիլ, Սևրան, Կլամար և այլ արվարձաններով)։

Վալանս առաջին մուտք գործողներից էին խարբերգցիները, մալաթիացիները և արճեշցիները, որոնք քաղաք հասնելուն պես 15 օրվա ընթացքում պետք է գրանցվեին քաղաքապետարանում և կատարեին մի շարք վարչա-իրավական ձևականություններ։ Վալանս եկած հայերը ստանում էին գրանցման քարտ։ Այն 1926 թ. փոխարինվեց աշխատավորի ինքնության թղթով, որը ֆրանսահայի միակ փաստաթուղթն էր[1]։

Վալանսում բնակություն հաստատող հայերի համար դժվարությունները շատ էին (ֆրանսերենի չիմացությունը, տեղական կուլտուր-կենցաղային և էթնիկական հմտությունների բացակայությունը, դեպի «ասիացիները» տեղի բնակչության կասկածամիտ վերաբերմունքը, համապատասխան մասնագիտություններ չունենալը և այլն)։ Հայերն աշխատում էին գործարաններում ու ֆաբրիկաներում։ 1931 թ. տվյալներով վալանսահայ տղամարդկանց 50 %-ն աշխատում էր որպես սեզագործ բանվոր և միայն 10 %-ին էր հաջողվել տեղավորվել որպես բանվոր։ 25 %-ը զբաղվում էր միջին չափերի, իսկ 15 %-ը՝ մանրածախ առևտրով[2]։ 1926 թ. Վալանսում ապրում էր 796 հայ, որոնցից 550-ը՝ հին քաղաքի շրջանում։ 60-ից բարձր տարիք ունեցողները կազմում էին 2 %-ը[3]։

Վալանսահայերի երիտասարդ տարիքը նպաստում էր ամուսնությունների զգալի աճին։ Այն 1926 թ. կազմում էր 23,6, 1929 թ.՝ 46 %, իսկ 1930 թ.՝ արդեն 50 %[4]։ Այս թվերը պարզորոշ ցույց են տալիս, որ ամուսնություն-

---

[1] A. Blaise, A propos dela communaute armenienne de Valence (these). 1987—1988, p. 26.

[2] P. Garagnon, La colonie armenienne de Valance sur Rhone (Revue de Geographie Alpine, 1956, p. 525).

[3] A. Blaise, նշվ. աշխ., էջ 28։

[4] A. Boudjikanian-Keuroghlian, Les armentens dans la region Rhone Alpes (Revue de geographie de Lyon, 1978, p. 108).

ների թիվը 5 տարվա ընթացքում ավելի քան կրկնապատկվել է։ Ամուսնությունների բարձր աճն իր հերթին հանգեցնում էր ծնունդների բարձր տոկոսի (1925 թ. կազմում էր 50) և նպաստում համայնքի արագ աճին։ Զարգացման այս տեմպերը ստեղծում էին համայնքի սոցիալ-մշակութային ինտեգրացման բարենպաստ գործոններ։ Վալանսի սոցիալական կյանքի մեջ հայերի ներգրավման գործընթացին զուգահեռ ի հայտ եկան նաև ազգային-ավանդական ինստիտուտներ։ Հայ առաքելական եկեղեցին, ինչպես ամբողջ Ֆրանսիայում, այնպես էլ Վալանսում, դարձավ ազգային-համայնքային կյանքի կենտրոնատեղին։ Հայ առաքելական եկեղեցին Վալանսում գոյություն ունի 1926 թ. և նրան կից դպրոցը հիմնվել է միաժամանակ։ Ինչպես հայտնի է, հայկական եկեղեցիները սփյուռքում բացի հոգևոր ֆունկցիաներից, ունեն նաև մշակութային, կրթական և քաղաքական նշանակություն։ Վալանսում ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շենքը կառուցվել է 1953 թ.՝ ժողովրդական հանգանակությամբ։ Վալանսահայ բնակչության 70 %-ը պատկանում է առաքելական եկեղեցուն և իր մեծամասնությամբ այս կամ այն կերպ մասնակցում է եկեղեցական ծեսերին ու արարողություններին։ 1920-ական թվականներին հիմնվել է նաև հայ բողոքական համայնքը, որը սկզբնական շրջանում գործում էր ֆրանսիական բողոքականների հետ համատեղ, սակայն այս համայնքի գործունեությունը հետագայում դարձավ ավելի ընդգծված ազգային։ Արդեն 1950 թ. նրանք ունեին իրենց կրոնական հավաքատեղին։ Վալանսում ավելի ուշ շրջանում՝ 1936—1938 թթ., կազմակերպվեց նաև հայ կաթողիկե համայնքը։ Այստեղ առաջին քարոզիչներից էին Մխիթարյանների ներկայացուցիչները, որոնք և դրեցին կաթողիկե համայնքի հիմքը։ Հետագայում, պատերազմից հետո, հայ կաթոլիկներն ունեցան նաև իրենց շենքը Վալանսում։ Այս համայնքին է պատկանում վալանսահայության մոտ 5 %-ը։ Վալանսի կաթոլիկե հայ համայնքի համար խոշոր իրադարձություն էր կարդինալ Աղաջանյանի այցելությունը Վալանս, որտեղ նա հանդիպումներ ունեցավ այդ համայնքի ներկայացուցիչների հետ։ Վերը նշված կրոնական համայնքներից բացի, Վալանսում գոյություն ունի այսպես կոչված «Մարանթա» բողոքական աղանդի հետևորդների համայնքը, որը բավականին մեծաքանակ է (հավատացյալների մոտ 10 %-ը)[5]։

Կրոնական համայնքների ստեղծմանը զուգընթաց հիմնվում են նաև հայ երեք կուսակցությունների մասնաճյուղերը։ Վալանս եկած հայ գաղթականների մեջ քիչ չէին նաև քաղաքական գործիչները, որոնք սկսեցին վերստեղծել իրենց կուսակցական մարմինները. մի խումբ ռամկավարներ 1925—1926 թթ. ստեղծեցին ռամկավար ակումբ, որը միավորում էր մոտ 30—40 համախոհների։

Նույն թվականներին է ստեղծվում Հ. Հ. դաշնակցության Վալանսի առաջին խումբը, որը 5—6 տարվա ընթացքում վերածվում է ուշագրավ մի կազմակերպության, 100-ից ավելի անդամներով։ Վալանսի քաղաքական կյանքը մշտապես սերտորեն կապված է եղել հայաբնակ կենտրոնների՝ Փարիզի, Լիոնի և Մարսելի քաղաքական իրադարձությունների հետ, որոնց արձագանքներն ազդել են վալանսահայության հանրային կյանքի վրա։ Այս իմաստով շատ հետաքրքիր է այն փաստը, որ դաշնակցական կուսակցության ներսում 1930-ական թվականներին տեղի ունեցած մարտկոցական շառաչումն իր հետևորդներն ունեցավ նաև Վալանսում, ինչպես նաև զարգացման ու անկման նույն փուլերը։

1925 թ. Վալանսում ստեղծվում է նաև հնչակյան ակումբ, որն առաջին երկու կուսակցությունների համեմատությամբ ավելի քիչ անդամներ ուներ՝ առաջին հերթին Ֆրանսիայում այս կուսակցության թույլ ազդեցությունն ստանձնելով։ Վալանսի կուսակցական մասնաճյուղերն ակումբային տիպի են և մեծ

[5] A. Blaise, նշվ. աշխ., էջ 33։

մասամբ կրկնում են կենտրոնական մարմինների ուղենշումները, սակայն, անդամների փոքրաթվության պայմաններում անգամ, այս կոսակցությունների ակտիվիստները տասնամյակների ընթացքում կարողանում են աշխուժորեն կազմակերպել վալանսահայ համայնքի քաղաքական կյանքը։

Երրորդ գործոնը, որը լրացնում է Վալանսի հայ համայնքի կազմավորումը, բազմատեսակ և բազմազան կազմակերպությունների հիմնադրումն ու գործունեությունն է։ Վալանսում հիմնականում սկսեցին գործել ֆրանսահայ կամ սփյուռքահայ այս կամ այն կազմակերպությունների մասնաճյուղերը։ Այսպես, Վալանսում հիմնադրվել են ՀԲԸՄ-ի, ՀՕԿ-ի, Համազգային միության մասնաճյուղերը։ ՀԲԸՄ-ն 1929 թ. ունեցավ նաև իր մարզական խումբը, որ կոչվեց ֆրանսահայ երիտասարդության մարզական միություն, իսկ Համազգայինը՝ «Հոմենթմենի» մարզական ակումբը։

Վալանսում սկսեցին գործել նաև հայ կարմիր ու կապույտ խաչի մարմինները, Մալաթիայի կրթասիրաց միությունը, Զափսհաս որբերի միության (ՁՈՄ) մասնաճյուղը և այլն։ Վալանսում գործող այս միությունները կողմնորոշված էին դեպի հայ կուսակցությունները, ինչը այս քաղաքական խմբերի առճակատմանը հավասարազոր բաժանում էր մտցնում համայնքում։ Սրան հակառակ, Վալանսում 1920-ական թվականներին հիմնվում է «Ազգային միությունը», որը դառնում է վալանսահայության ներկայացուցչական մարմինը և համայնքային միասնականության խորհրդանիշը, որտեղ կողք կողքի աշխատում են կրոնական համայնքների, կուսակցությունների ու կազմակերպությունների ընտրյալ անդամները։

Համայնքի ձևավորմանը և Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական կյանքի մեջ ներգրավմանը զուգընթաց բուն համայնքի ներսում տեղի էին ունենում նաև էթնիկական ձևափոխումներ։ Սկզբնական շրջանում համեմատաբար հեշտությամբ մասնակցելով Ֆրանսիայի տնտեսական կյանքին, հայերը թույլ հաղորդակցման մեջ էին ֆրանսիական շրջապատի հետ։ Ֆրանսերենի չիմացությունը և կենցաղային հմտությունների բացակայությունը սահմանափակում էին շփումների հնարավորությունը և հայերը ներամփոփված էին իրենց ընտանեկան-ազգային կյանքի մեջ։ Այդ շրջանում, ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Վալանսում բազմասերունդ հայ ընտանիքներում գերակշռում էր հայկական ազգային ոգին, որն ամբողջապես հակադրվում էր ուծացման վտանգին։ Սակայն, սոցիալ-կենցաղային անհրաժեշտություններն աստիճանաբար թելադրում էին տեղական ապրելակերպի նորմերը, հատկապես ֆրանսերենին լավ չտիրապետելը։ Ուստի, երիտասարդ սերունդն աստիճանաբար ձեռք էր բերում այդ հրամայական ունակությունները։

Վալանսահայ համայնքը պատերազմի տարիներին ծանր փորձություններ կրեց։ Ֆրանսիական բանակ մեկնեցին մոտավորապես 350 հայ երիտասարդներ, որոնցից 10-ը ռազմի դաշտերում զոհվեցին, իսկ 72-ը գերի ընկան։ Երբ զինակից բանակները Միջերկրական ծովի ափերից սկսեցին իրենց հարձակումը, Վալանսը ենթարկվեց ուժեղ ռմբակոծության և շատ հայաշատ թաղամասեր ավերվեցին։ 50-ից ավելի հայեր զոհ գնացին այդ ռմբակոծության[6]։

Ինչպես ամբողջ ֆրանսահայության, այնպես էլ վալանսահայերի համար, Երկրորդ համաշխարհային պատերազմը դարձավ անցումային դժվար մի շրջան, որից հետո հայ համայնքում տեղի ունեցան ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, քաղաքական և էթնիկական տեղաշարժեր։

Ժողովրդագրական պատկերը Վալանսում պատերազմից հետո կտրուկ փոխվեց։ Ծնելիության աճը 40 %-ով ընկավ։ 1931 թ. այն կազմում էր 50 %, իսկ 1945-ին կազմեց ընդամենը 9 %։ Սրա հիմնական պատճառն այն

---

6 Լ. Զորմիսյան, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, Բեյրութ, 1975, էջ 307։

էր, որ 1930-ական թվականներին հայ երիտասարդությունը, որը կազմում էր վալանսահայության գերակշռող մասը, ամուսնությունների բարձր տոկոս ունեցավ մինչև 1945 թ. և այդ շրջանը հատկանշում է ծնունդների մեծ աճով։ Նկատվեցին նաև տարիքային բնութագրի փոքր փոփոխություններ։ 1950 թ. 60-ից բարձր տարիք ունեցողները կազմում էին 8 %, և այս միտումը գտնըվում էր իր ընթացքի մեջ։ Վալանսի ժողովրդագրական պատկերը փոխվեց նաև 1947 թ., երբ 303 վալանսահայեր հայրենադարձվեցին։

Սոցիալ-մասնագիտական առումով նույնպես փոփոխություններ տեղի ունեցան։ 1931—1945 թթ. հայ սեփական գործ ունեցողների թիվը կիսով չափ կրճատվեց։ 1954 թ. այն կազմեց 22 %, որի հիմնական մասը բարձր տարիք ունեցողներն էին։ Արհեստավորների և առևտրականների թիվը սրընթաց բարձրացավ։ Այն հասավ 52 %-ի և կազմեց Վալանսի ամբողջ օտարազգի առևտրականների 75 %-ը։ Այս թիվը ցույց է տալիս այն զգալի կշիռը, որ հայերն ունեին Վալանսի առևտրի մեջ։ Վալանսահայության այս խավը նյութական միջոցներ ձեռք բերելով, իր համար բարեկեցիկ վիճակ ստեղծեց։ Սոցիալական տեղաշարժերն իրենց ազդեցությունն ունեցան նաև Վալանսի հայ կանանց տնտեսական ակտիվության վրա, որն արագորեն ընկավ, քանի որ հաջող գործավարությամբ զբաղվող հայ տղամարդիկ ապահովում էին ընտանիքի հաստատուն վիճակը[7]։

Մինչև 1960-ական թվականները Վալանսի համայնքում զգալի էմիգրակական տեղաշարժեր տեղի չունեցան։ 1961 թ. հայրենադարձությունը նկատելի հետևանքներ չունեցավ Վալանսում և ամբողջապես վերցրած ֆրանսահայ համայնքում։ Սկսած 1960-ական թվականներից Միջին և Մերձավոր արևելքի հայ համայնքներից դեպի Եվրոպա ու Ամերիկա գնացող գաղթականների ընդհանուր հոսանքից մի խոշոր մաս հաստատվեց Ֆրանսիայում, այդ թվում և Վալանսում։ Այստեղ առաջին ժամանողներն էին սիրիահայերը, որոնց ամենաուժեղ հոսքը նկատվեց 1966—1969 թթ.։ Մոտ 100 սիրիահայ ընտանիքներ իրենց բնակության վայր ընտրեցին Վալանսը և նրա շրջակայքը (շուրջ 300 հոգի)։

Վալանսում Թուրքիայից գաղթած հայերը փոքր թիվ են կազմում։ Գաղթականների երրորդ խումբը Լիբանանից եկած հայերն են։ Լիբանանում քաղաքացիական պատերազմից հետո 1975 թ. սկսվեց հայերի արտահոսքը Ֆրանսիա։ Մինչև 1981 թ. Վալանսում հաստատվեցին մոտ 1500 լիբանանահայեր, որոնց մեծ մասը ստացավ «վտարանգու» կարգավիճակ։ Վալանսի հայ համայնքը 15 տարվա ընթացքում քանակապես զգալի ավելացավ։ Եթե 1970 թ. վալանսահայությունը հաշվվում էր 1745 մարդ, ապա 1982 թ.՝ 4987 (միայն Վալանս քաղաքում, իսկ շրջապատի հայ բնակչությունը հասավ 6000-ի)[8]։

Հայ վերադարձակիները սոցիալ-տնտեսական կյանքում ունեցան նույն ճանապարհը, ինչ որ իրենց ֆրանսահայ հայրենակիցները, միայն գրաստորեն ավելի կարճ ժամանակահատվածում։ Լիբանանահայերի և սիրիահայերի առավել ունևոր խավերը տեղավորվել էին հիմնականում Փարիզում և շրջակայքում, իսկ Վալանսի և գավառական այլ շրջաններում հաստատվել էին նյութապես մավազ ապահովվածները։ Սկզբնական շրջանում նրանք ստիպված էին աշխատել որպես բանվորներ, սակայն 10—15 տարվա ընթացքում վիճակը փոխվեց և ներգաղթածների մեծ մասն արդեն 1988 թ. զբաղվում էր արհեստագործությամբ կամ առևտրով։ Ներգաղթողների արագ տնտեսական ինտեգրացման կարևոր պատճառներից մեկը բուն ֆրանսահայերի ստեղծած առևտրի ու տնտեսության արդեն գոյություն ունեցող կառույցն էր։ Լիբանանից, Սիրիայից և Թուրքիայից ներգաղթածները ոչ միայն քանակապես, այլև

---

[7] A. Blaise, նշվ. աշխ., էջ 105—108։

[8] Նույն տեղում, էջ 109։

որակապես ձևափոխեցին համայնքը։ Նրանք զգալիորեն աշխուժացրին համայնքի ինչպես մշակութային, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքը և փոփոխություններ մտցրին քաղաքական ուժերի հարաբերակցության մեջ։

Վալանսի քաղաքական կյանքի էպիկենտրոնում են գտնվում այնպիսի համահայկական հարցեր, ինչպես հայ դատը, Հայաստանի տնտեսական և քաղաքական կացությունը, Ֆրանս-թուրքական ու Ֆրանս-խորհրդային հարաբերությունները և այլն։

Վալանսում ներկայումս գործում են բազմաթիվ միություններ, որոնցից շատերը նոր են ստեղծվել, իսկ մյուսներն ունեն տասնամյակների պատմություն։ Բերենք այդ կազմակերպությունների անդամների թվերը, որը և պատկերացում կտա վալանսահայ համայնքի հայապահպան առավել աշխույժ հատվածի մասին։ ՀԲԸՄ-ն կանանց և երիտասարդական իր ենթախմբով ունի 310 անդամ, ՀՄԸՄ-ը՝ 40, ռամկավարները՝ 30, դաշնակցությունը՝ 100, Հայ դատի հետապնդման հանձնախումբը՝ 10, Կապույտ խաչը՝ 60, «Նոր սերունդը»՝ 30, Ֆրանսահայ մշակութային միությունը՝ 60, ԺԱՖ-ը՝ 10, Ռոմանի ազգային միությունը՝ 15, Մալաթիայի և Խարբերդի հայրենակցական միությունները՝ 200, Հայ նախկին ռազմիկների միությունը՝ 20։ Ընդհանուր առմամբ հայ հասարակական կյանքի ակտիվիստների թիվն անցնում է 1000-ից։ Վալանսահայ համայնքի մյուս մասը թեև որևէ կազմակերպության անդամ չէ (անդամավճար մուծող), սակայն իր գերապատվությունն է տալիս դրանցից որևէ մեկին և մասնակցում դրա նախաձեռնություններին։ Ներկայումս Վալանսում կարևոր դեր է խաղում կրոնական համայնքների և կազմակերպությունների ներկայացուցչական մարմինը՝ Ազգային միությունը, որի գործունեությունը նպաստում է համայնքի միասնականությանը և հայապահպանմանը։ Այս կազմակերպության ղեկավարությունն ընտրվում է դեմոկրատական ճանապարհով։ Վարչության մեջ ընտրվում են 5 հոգի առաքելական, և 2-ական հոգի կաթոլիկ ու բողոքական համայնքներից։ Միությունն ունի նաև օժանդակ աշխատողներ։ Այն իրականացնում է կապը նաև Վալանսի քաղաքապետարանի հետ, որը շահագրգռված քաղաքականություն է վարում հայ համայնքի հետ։ Դա բացատրվում է նրանով, որ Վալանսի հայ համայնքն իր քանակի և տնտեսական ակտիվության պատճառով զգալի դեր է խաղում քաղաքի կյանքում։ Վալանսի հայ համայնքը Փարիզից, Մարսելից և Լիոնից հետո չորրորդն է հայերի քանակով։ Քաղաքի 10 բնակչից 1-ը հայ է և այս հանգամանքը չի վրիպում ֆրանսիական քաղաքական-վարչական անձնակազմի ուշադրությունից, քանի որ ապագա ընտրապայքարում հայ համայնքի կողմնորոշումը կարող է վճռական լինել։

Վալանսի կենտրոնում գտնվող հրապարակներից մեկը կոչվում է Միսաք Մանուշյանի անվամբ, նույն հրապարակում է գտնվում Եղեռնի զոհերին նվիրված հուշարձան, կա նաև «Նոևան, Հայաստանի մայրաքաղաք» անունը կրող փողոց։ Վալանսի քաղաքապետարանը համայնքային կենտրոնի համար հայերին մի մեծ ֆրանսիական եկեղեցի է տրամադրել, որը վերականգնվում է և ցնծելու է հոբաբարձության սեփականությունը։ Այս կենտրոնն օգտագործվելու է նաև մշակութային և կրթական նպատակների համար։

Վալանսում ազգային կյանքն աշխուժացնելու ծրագրումները, համայնքային կյանքը իր հակասություններով և խայտարդետությամբ նպաստում են հայ համայնքի էթնոմշակութային դիմագծի պահպանմանը, սակայն մյուս կողմից հայ համայնքը գտնվում է ուծացող ուժեղ միջավայրում։ Էթնոտարբերակող հատկանիշների կորուստը պայմանավորված է ընդունող երկրի մշակութային, կրոնական, սոցիալական, քաղաքական և այլ գործոններով։

Վալանսում ընթացող ուծացման երևույթներն ունեն ընդհանուր առմամբ նույն բնութագիրը, ինչ որ ամբողջ ֆրանսահայ համայնքը, սակայն ի տարբերություն մեծ քաղաքների (Փարիզ, Լիոն, Մարսել) փոքր հայ համայնքները ունեն նաև որոշ յուրահատուկ գծեր։ Ֆրանսիայի խոշոր քաղաք-

ներում ապրող հայերն ազգային դիմագիծը կորցնելու ուժեղ վտանգի տակ են գտնվում մի շարք պատճառներով։ Նախ, բնական սերնդափոխությունը կատարում է մամլիչի դեր՝ տասնամյակների ընթացքում ֆրանսահայ համայնքից խլելով հայկական հատվածներ, որի անդամները չունեն հայկական ազգային պատկանելության և ոչ մի հատկանիշ (լեզվի, մշակույթի, պատմության չիմացություն, ոչ մի կապ համայնքային կյանքի հետ, ֆրանսիական ինքնության զգացողություն և այլն)։ Բնակվելով, օրինակ, Փարիզում ֆրանսահայերը գտնվում են եվրոպական քաղաքակրթության և ֆրանսիական մշակույթի հզոր ազդեցության տակ, որը էթնոտեղեկատվության բացակայության պայմաններում վերջո հանգեցնում է հայկականության լրիվ կորուստի։ Սոցիալական առումով նոր կյանք մտնող երիտասարդի համար անհրաժեշտ է իմանալ ֆրանսիական հարուստ մշակութային ժառանգությունը, պատմությունը, ապրելակերպի բարոյական և էթնիկական չափանիշները, որոնք և պարտադրում են զուտ ֆրանսիական կրթություն ու դաստիարակություն։ Սա իր հերթին հանգեցնում է ազգային պատկանելության ընտրություն՝ հօգուտ ֆրանսիականի։ Կան նաև քաղաքական, քաղաքացիական, հոգեբանական, ընտանեկան և այլ բնույթի ուժացնող գործոններ, որոնք մեծ քաղաքներում հանրային կյանքի արագության ու տեմպին ներազդում են համազոր։ Հատկանշական է, որ հայերի մեծ կուտակումներ առկա են մեծ քաղաքները շրջապատող արվարձաններում կամ արբանյակ-քաղաքներում, ինչպես օրինակ, Փարիզի Ալֆորվիլ, Իսի-լը-Մուլինո, Կլամար, Լիոնի Վիլորբան կամ Մարսելի Սեն-Անտուան արվարձաններում։

Այս բոլորը հաշվի առնելով կարելի է պնդել, որ Վալանսում բացի վերը նշված էթնիկական գործընթացներից (իհարկե, ոչ բոլոր) առկա են նաև զուտ այս համայնքին յուրահատուկ երևույթներ։ Նախ, Վալանսի հայ համայնքին բնորոշ չէ մեծ քաղաքների հայերի տարանջատվածությունը։ Այս քաղաքում գոյություն ունեն հայկական թաղամասեր ու փողոցներ, որտեղ աչքի է զարնում հայերի ներկայությունը։ Հանրային համապարփակ կյանքը նպաստում է համայնքի կենսագործունեությանը, իսկ աշխույժ հաղորդակցությունը՝ ազգային-ավանդական միջավայրի պահպանմանը։ Համայնքի ազգային դիմագիծը պահպանելուն ուժեղ օգնում է հայերի քանակը (համեմատած քաղաքի բնակչության հետ), որը նրան ուժ և ինքնուրույնություն է հաղորդում։ Վալանսը Ֆրանսիայի չափանիշներով գավառական քաղաք է, որը սահմանազատվում է մեծ քաղաքների բուռն կյանքից և որտեղ ժառանգականության մասին պահպանվել են տեղական ավանդական պատկերացումները, որն իր հերթին ազդեցություն ունի վալանսահայ երիտասարդ սերնդի ազգային ինքնագիտակցության ձևավորման վրա։ Շատ կարևոր է նշել մի փաստ ևս. ֆրանսահայ համայնքի չորրորդ սերնդի մեջ ուժեղացել է հետաքրքրությունը դեպի իր արմատները և այս երևույթը դեռևս կարող է գիտակցված լուրջ գնահատականի։ Իրենց դաստիարակությունը ստանալով հայկական դիմագիծը և ավանդական նորմերը մեծ չափով կորցրած ընտանիքներում, ունենալով զուտ ֆրանսիական կրթություն, մեծ մասամբ անտեղյակ հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ժառանգությանը, նոր սերնդի մեջ առաջանում է էթնոտեղեկություններ ձեռք բերելու ցանկություն։ Այս երևույթը կարելի է որակել որպես բացառիկ։ Սրա բացատրություններից մեկն այն է, որ հայրենիքում տեղի են ունենում խոշոր իրադարձություններ, որոնք ունեն միջազգային արձագանքներ (արցախյան շարժում, երկրաշարժ) և հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը ճանաչվում է քաղաքակիրթ աշխարհի կողմից։ Այս ամենը ֆրանսահայ երիտասարդության կարևոր մի հատվածին մղում է վերադառնալու իր արմատներին և վերարտադրելու հայկական ազգային ոգին։

Նկատելով Վալանսի հայ համայնքում տեղի ունեցող էթնիկական գործընթացների ընթացքից, կարելի է ասել, որ այս համայնքն ունի գոյատևման հեռանկարներ։

АРМЯНСКАЯ ОБЩИНА ВАЛАНСА

Н. А. МКРТЧЯН

Резюме

Расселение армян на территории Франции шло по трем направлениям. Одним из районов проживания армян стал Рон-Альпийский район. Большинство армян сконцентрировалось в Валансе. Этнокультурные и политические процессы, происходящие в Валансе, характерны для армянской общины Франции. В настоящее время община Валанса является жизнеспособной, там ярко проявляются тенденции развития и сохранения самобытности общины.